Արձանագրություն N 2
ԵՔ-ԳՀԾՁԲ-20/7ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 12.11.2019թ.
Ժամը՝ 14:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գասպարյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Մարտիրոսյան /գնահատող/, Հ. Թորոսյան /գնահատող/
Ս. Սողոմոնյան /բացող/, Ա. Կարապետյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Թ. Հովեսյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/7» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Գասպարյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի նոյեմբերի 12-ին, ժամը 14:30-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. « ԵՔ-ԳՀԾՁԲ-20/7» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Գասպարյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Ներսես Եփրեմյան Նորիկի» Ա/Ձ
2	Պրոֆմոնտ ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3 . Մասնակցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Գասպարյան)

3.1 Գնանշման հարցում ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

1.Նոր Նորք վարչական շրջանի վարչական շենքի կաթսայատան սպասարկման և շահագործման ծառայությունների				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
Պրոֆմոնտ ՍՊԸ	1,800,000	850000	170000	1020000
Ներսես և Ընկերներ ՍՊԸ		1640000		1640000

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ – 0

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Գասպարյան)

4.1 Մասնակցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը բայց դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

- «Ներսես Եփրեմյան Նորիկի» Ա/Ձ-ի հայտը armeps.am համակարգով մուտք է արվել «Ներսես և Ընկերներ» ՍՊԸ-ի կողմից.

-«Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացած հայտը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, և ենթակա է մերժման հիմք ընդունելով՝ <<

կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետը և հրավերի 7.20-րդ կետը /Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ/:

4.2 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով մերժեց «Ներսես Եփրեմյան Նորիկի» Ա/Ձ և «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

5.Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

(Ա. Գասպարյան)

5.1 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/7» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացրած հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

5.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը հայտարարել չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին 1-րդ ենթակետի:

5.3 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Գասպարյան

---------- Հ. Մարտիրոսյան

---------- Հ. Թորոսյան

Անդամներ՝ ---------- Ս. Սողոմոնյան

---------- Ա. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Թ. Հովեսյան